


ՀԱՍՑԷ



M. ARCHAM
Poste Réstante.

(Grèce) ATHÈNES

Ծանուցանելու ընդունելի է՝
դիւրամատչելի գիներով:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԻՈՒԹԻՒՆԻ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՊԱՅՄԱՆ

Միութիւնի յանդուարտ ամէն
տեղ հասնող կը ծախուի:
Արեւելի և շրջականերու հա-
մար, մէկ թիւը 10 Լէվիթա,
Արտասահմանի համար, 15 սնթա:

ՀԱՒԱՔԱԾՈՒ ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐՈՒ

Ա.ՏԱՐԻ

ԱՅԵՆՔ 1896 ՆՈՅԵՄԲԵՐ 10

ԹԻԻ 2

ՕՐՈՒԽՆ ԽՆԴԻՐ

Քաղաքական հորիզոնը մթագնեալ է:
Եւրոպայի դիւանագիտական խոհանոցներու
մէջ մեծ դաշտնապահութեամբ մի օշարակ
կը պատրաստուի, անշուշտ թուրքին հա-
մար: Յուսահատ թուրքը կանխատե-
սելով այդ, ծայրայեղ միջոցներու կը
դիմէ. մէկ կողմէն իր սովորական խո-
րամանկ քաղաքականութեամբ ամբողջ
Եւրոպան ծաղրելով կը խոստանայ ան
միջապէս գործադրել իրեն առաջարկ-
կուած քարենորոգմանց ծրագիրը. իսկ
միւս կողմէն փութով կաշխատի հինգ
ական դահէկան հաւաքել թուրքերէն
իբրեւ արտասովոր ազգային տուրք:

Առ այս Եւրոպական մեծ Տէրութեան
դեսպանները իրենց կառավարութիւն-
ներէն հրահանգ ստանալով, պաշտօն-
ապէս յայտարարեցին Բ. Դրան թէ՛ այդ
ապօրինի տուրքի հաւաքումէն՝ եթէ
երբեք մոլեւանդ թիւրք խուժանի
կողմէ ամենափոքր յարձակում մը պա-
տահի քրիստոնէայ ծողոյղոյցէն դէմ,
մայրաքաղաքին և կամ զաւանդերու
մէջ որեւէ պատճառով եթէ անկար-
գութիւն մը պատահի, քաղաքականապէս

պատասխանատու պիտի ծանչնան
զինքն. ինչպէս վերջերս պրլադ
կողմը սօֆթաներու խումբ մը կա-
ռավարութեան դէմ բողոքելու
նպատակաւ համախմբուած և ուս-
տիկանութեան կողմէ ձերբակալուած
էր. այսու հանդերձ Բ. Դրանը
այդ պաշտօնական զեկուցման
քաջասական պատասխան մը տա-
լով իր գործը կը շարունակէ, որ-
ուն ծանր հետեւանքները չպիտի
ուշանա՞նք տեսնել: Ահա այդ ակն-
կալելի ընդհ. կոտորածին տեղի չը-
տալու համար է որ Եւրոպայի Դի-
ւանագիտութիւնը առայժմ զաղտնի
կը գործէ: Թէ՛ Դիւանագիտա-
կան այս լուրջ բանակցութիւնն որ
աստիճան արդիւնաւոր պիտի կըր-
նայ ըլլալ մէջ համար, այժմէն ոչ
ոք կարող է նախատեսել: Միայն
սա կրնանք թէ՛ Ձարին Եւրոպիոյ
շուրջը ըրած ուղեորութիւնն որ
քաղաքական նպատակ ունէր, Եւ-
րոպական մամուլը կը հաստատէ թէ՛
Անգլիոյ և Ռուսիոյ միջև համաձայ-
նութիւն գոյացած և Արեւելեան
տափ խնդրի նկատմամբ Եւրոպա-
կան քաղաքականութիւնը զգալի
կերպով փոփոխուած կ'ընթէ, ձե-
տեապէս Հայկական հարցն ալ նոր
և յաջող շրջանի մէջ մտած կը կար-
ծուի:

ՆԱՄԱԿ ԳԱՋԻՐԵՅԷՆ

(ՇԱՐ. Ա. ՌԻԿԷՆ և ՎԵՐԶ)

Նազարպէկեանց հախաւ Հնչակեան կու-
սակցութեան վարչութեան ընդունած և հրա-
տարած ծրագրի, ինքն քաջաբճակ միապե-
տական ձեռք կը վարէր կուսակցութեան գործերը:
Թէ՛ ինչպէս:

Գում-Գաբուի ցոյցէն վերջ երբ լուծու-
եցաւ Տրապիզոնի մէջ գտնուած կեդրոնական
վարչութիւնը անդամներու ոմանց ձերբակալ-
մամբ, ոմանց փախստեամբ, Նազարպէկեան
յարմար առիթ գտաւ ինքն անձամբ վարելու
գործերն, առանց միւս անդամոց դիտողու-
թեանց և խորհրդոց կարեւորութիւն տալու:

Նազարպէկեան Տ տարի է ի վեր կը վարէր
Հնչ. կուսակ. շէկը. միայն իր կնոջ խորհրդով
միշտ վաւել ջանալով այն գործիչներն, որոնք
մայր հողին վրայ աշխատած էն և կաշխատին:
Այս կարգի անեմք երբ կը յանդգնէին քննադա-
տել Աւօյի նիսա և Էսամուլ ընթացքը. շուտով
կը ստանային իրենց պատիժը. ինչպէս պ. Շ.
Աւօյի Բ. կամ Տ. գործակալի ձեռամբ մատու-
ած, միւս ՇԻ. կիպրոսի մէջ խեղդուած և Սար-
կաւազ պուլարիոյ մէջ սպանուած է արդէն
շատ անկէղծ գործիչներ ալ գործի ասպարէզէն քա-
շուեցան, նշարելով մարդասպան Սուլթան Հա-
միտ ընկեր Աւօյի դաւադիր ընթացքը:
պ. Նազարպէկեան ամէն միջոց ի գործ կը դնէր
որ ապագային նախագահ և կամ իշխան մը ըլ-
լայ. Բայց ահա իր Էսամուլութեամբ ամբողջ-
Հայաստանը աւերակ դարձուց, և անոր թըշ-

ուսումնասիրեալ պատճառ եղաւ :

Ուստի պէտք է անհետացնել այն ամէն անձինք , որոնք կը քանան կամ կարող են նախաճառել զնախարարի . ինչպէս Աղասի : Ապահւնւն : , որոնք ըստ Աւօյի երբեմն Բազմեցողութեան էին : Իսկ այժմ կարտաքսէ զանոնք . ինչո՞ւ որովհետեւ երբ Զէյթունի Հայ զօրագոյրերը ԱԽՕ և ՄԱԲՅ միրտան կը խնդարէին զիրենք , պաշտելի էին . իսկ երբ կը դառնան Լօծտոն և կը տեսնեն թէ՛ Հնչակեան կուսակցութեան կերպը , վարչութիւնը , նախագահը և զան. ձապետը Աւօն և իր կիներէն : Բնականաբար ճշմարիտ հայրենասէր մը չէր կարող դիտել խառն հանդարտութեամբ այդ բաղդախնդիրներուն այն դաւադրութիւնները , որոնք կը սպառնային ուսնակոյն ընել Հայ Հերոսներուն արեամբ ուղղութեամբ Հայրենիքի կենսական շահերը : Ահա այս աղաքաւ յիշեալ Հերոսները (Հայրենասէրներ : դաւաճան , կեղտոտ հնչակաւոր) արտաքսուեցան Աւօյի միապետական իշխանութեան կողմէ :

Ահա սիրելի ժողովուրդ . ձեզ կը թողունք դատել անոր արարքները , որ ոչ միայն մայր Հայաստանի մէջ չէ գործած իբրեւ յեղափոխական , այլ եւ ընդհանրապէս ազատ քաղաքներու մէջ նստած , մի քանի խնկարիւն կոյր գործիչներ իր շուրջը առած , աւելցնելով զովքանութիւններէ հպարտացած (ինչպէս մարդասպան համար իր պալատին մէջ) զանազան հրամաններ կ'արձակէր , յորմէ առաջ եկաւ 500.000 խեղճ հայերու կորուստը : Գաղութեան ցուրտէ , երկիւղէ քան սուղէ մեռնողներն ալ :

Երբ 1890 իցոյցը կատարուեցաւ , դաշնակցութեան Գոյութիւնը սկսաւ և ապագային կարևոր ուժերն երկուքի Բաժնէն : Այդ պատճառովս պատճառով մի կըր . Դարձեալ նախարարէր . որովհետեւ ամբողջ 1 1/2 տարի մաքաւեցան կուսակցական անձինք բայց պ. նախարարէն անոնց ջանքերն ապարդիւն հանելու հակառակելով միութեան Գաղափարին զոր առաջարկած էին իրեն կարգ մը Հնչակեաներ : Դաշնակցականները համաձայնեցան միասնաբար պայմանաւ որ Աւօն չհնչակի խմբագրութենէ քաշուի , և երթայ Տրապիզոն ճամիւս Գործէ . Եթէ այս պայմանը ընդունեն , դաշնակցականները միացած պիտի ըլլային , Բայց կարելի էր նախարարէն այդչափ ստորկանաւոր Գործիչներու դաժանարար մտնել :

Ժողովուրդը իրաւունք ունի հաւատալու թէ Աւօն խրատուեցող 30.000 ոսկի (տարածայնութիւն) չ'ըզերյանձնել ուր որ անկէ , և ինքզինքն արդարացելու համար կը յանդիման շրջաբերականներ հրատարակել և կեղծ «Հնչակ» հանելով կը մաքաւի ճշմարիտ քուէներով ընտրուած վարչութեան դէմ , որ քուէից Բացարձակ առաւելութեամբ տաքսած է զինքն և իր կիներ կուսակցութեան անդամակցութիւն :

Երկու խումբ ալ մի քանի տխմարներու , որոնք նախարարէն անման գիւցազ մը նկատելով մեաջած էն իրեն խնդարիւններ :

Թող միտքերն ինքն Մկրտիչ Թիւթիւն . Զիե՛ք , որուն համար քանի մը տարի առաջ շատեր կը սէնթ թէ Բաղդախնդիր մ'է , և իր լիւրճաւոր համար իր Ազգը կը ծախէ . ո՞՞՞մա՞նք հակառակելով կը պաշտպանէին զայն . մի գոհեմէր այդ պարագային ալ առնել Բաղդախնդիրը կողմէն պէտք էր Գրիտեան որ իրենց այդ ընթացքով ոչ ինչ տան ՈՏՐԱԳՈՐԾ ԱԽՕՃ , որով թերեւս Հայկական խնդիրը վիճել տալով , ապագային մեծ պատասխանատուութեան տակ պիտի մնան :

Իսկ նորակազմ վարչութիւնէն կը խնդրենք որ ամէն զանք ի գործ դնէ և հետամուտ լինի

ժամ առաջ միանայ . Դաշնակցականներու հետ և միանգամ ընդ միշտ վերջ տայ կարգ մը անտէղի պառակտումներու և խլրտումներու :

Եթէ կարելի չէ միանալ , Գէթ Զամէրաշխարհ գործել : Դաշնակցականները ժամանակին զիջում ըրին և յանձն առին միանալ . այժմ յարմար ժամանակն է որ Հնչակեան կուսակցութիւնն ալ նոյն ընէ փոխադարձաբար , յօգուտ և ի փրկութիւն մեր տառապեալ Ազգի և Հայրենեաց :

Ի դիմաց Հայ Գաղթականութեան Ունեցիկ Ընկերութիւն (Կնիք)

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԵՆ

(ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱՅԵՆ)

Կ. ՊՈԼՍՈՒՍ 26 Հոկտեմբեր

Նախորդ նամակով վերջացուցած էի խօսելով այն մրցման մասին , ուր քիւրտը և թիւրքը դէմ առ դէմ կը պայքարին . առաջինը Սուլթանական շնորհներուն կռիւնով և երկրորդը ՕՍՄԱՆԻՍՏԻԹԵԱՆ հին իրաւունքներով ուռած : Հիմա կուգամ իմացնել որ թիւրքերն ալ զուրկ մնացած չեն «կայսերական ուշադրութենէն» Առաւելական նախարար Մահմուտ Զէլալէտտինի նախադրութեամբ : Երկու շաբաթ առաջ կազմուեցաւ յանձնաժողով մը , որ հանգանակութիւններ պիտի կատարէր թիւրք պաշտպանութեան հանդէսէն : Երբ կառավարութիւն մը ինքզինքն պաշտպանելու համար կանոնաւոր զինուորական ուժէն աւելի պէտք կը զգայ վայելալ առաջակներու ազակցութեանը , դա կը նշանակէ թէ այդ կառավարութիւնը , աթոքէն քայքայուած ու կազմալուծուած ինքն իր մէջ , կը դիմէ դէպի անմիջական օրհասը . ասիկայ պատմական անհերքելի ճշմարտութիւն մընէ . Սրիւնակ պաղտատու խալիֆայութիւնը՝ իր հորձանման ամէն պարագաներով :

Սակայն տարբերութիւն մը կայ . «կայսրատու խալիֆաները Բողոքողին ազատ էին հրահրելու Տուղթիլի Եւոզակները» . անոնց ձեռքը յանձնելու համար երկրին տկարացած վարչութիւնը : Արեւմտաֆի խալիֆան , աւաղ , այդ պաշտիկ Թոյլուտութիւնն ալ չի վայելէր : Այնտեղեանց չէր կայացուցիչները հասկնալով որ թիւրք պաշտպանութեան պաշտօնապէս պիտի զինուին Մահմուտ Զէլալէտտինի յանձնաժողովին միջոցաւ , անցած ուրբաթ օր հաւաքաբար խիստ ծանուցադիր մը չէր կայացուցին Դրան . պահանջելով որ անմիջապէս լուծուի այդ յանձնաժողովը : Արդիւնքն անմիջապէս եղած է . կառավարութիւնը Բէն լուծած չէ յանձնաժողովը : սակայն նպատակը անմիջապէս փոխ

խած է , լրա փրկներու մէջ հրատարակել տալով որ յանձնաժողովը պիտի զբաղի ուստիականներու և Թանտարմաներու բարեկարգութեամբ և հանգանակութեան պիտի ձեռնարկէ թիւրք Բանակին պէտքերուն համար :



Երկար ժամանակ կայ որ ԱՐՏԱՍՈՎՈՐ և ՍՈՎՈՐԱԿԱՆ Դատարաններու (!!) և Բանտերու մասին Բան մը գրած չէմ : Ուստիականութեան Բանտը միջին հաշուով 1200 Հայ կը գտնուի շարունակ (վաւերական թիւ) և «Արտասովոր» ու «Սովորական» Դատարաններն ալ միշտ զբաղած են դատելու կարգ մը խեղճ հայեր , որոնք ուստիականներու և թիւրքերու վկայութեամբ կ'այս . զինուորներու , և ուստիականներու վրայ կրակ ըրած են» պէտք է ըսեմ որ այս վիճակը , ձերբախալութիւն , Բանտարկութիւն , դատաստան , կառավարութեան , մասնաւորապէս Եւրասիական նախարարին համար , այնքան ալ հաճոյ չէ , վասն զի ամսականներու վճարումին տարապայման յապաղման դէմ պիտի դարձան մընէ (!!) : Դատարանները բացէ ի Բաց կաշառք կը պահանջեն . մէկ մարդու համար 20 էն 200 ոսկի : Ես ինքզս տեսայ մէկ քանի խեղճեր , որոնք իրենց ունեցած յետին Գոհարեղէնը կամ արժէքաւոր առարկան ծախած էին , քանի մը ոսկի ձեռք ձգելով Երեւանդատ տեղանին կրէտոներուն ափը լեցնելու համար , ազատ արձակում կամ պատիժի թեթեւացում ստանալու յիշատակ : Ամբողջ ուստիականութիւնը , իր Բողոքիչներով և կազմակերպութեամբ , հայ ժողովրդի քսակին համար , ահարկու և մշտական տղրուկ մը դարձա՞ք է արդէն . ազիւ անցնի կը քամէ , ձախ կ'անցնի կը քամէ : Այսպէս , կառավարութեան ամսական վճարելու մտահոգութիւնն ալ Բաւախան թեթեւացած է . քանի հայերուն գրպանը դեռ քանի մը զուռ կը գտնուի , Եւրասիական նախարարը կրնայ հանգիստ սրտով իւր նաւապետը վճարել :



Գաղով թիւրք դատարաններու գործելու եղանակին և արձանագիտութեան , այնքան խայտառակ , չեն զալից և յիմարական են որ մարդ կ'ահարէի թիւրքերու այս աստիճան աներեւոյթեան առջև : Արտասովոր տեղանը Բազմաթիւ հայեր դատապարտեց , մի միայն թիւրքերու վէկայութեամբ . դատապարտելներուն ցուցակը առանձին լրկած էի ձեզ : (1) Այնտեղեանց դեպքաններուն Բ. Թարգմանները միջակերպ չեն լինուի կը գտնուին այդ հարցաքննութիւններուն և մանրամասն տեղեկագիր կը ներկայացնեն իրենց պէտերուն : Ստորագրուիտեղեկացած էմ որ այդ տեղեկագիրները միտու մի կը նկարագրէ (1) Դժբաղդաբար մինչև այսօր մերձեւորը հասած չէ այդ գրութիւնը :

գրէն թիւ ԲՔ Դատարանին խայտառակութեան
 թիւները և մանաւանդ Ռուսական Դատարանի
 ման ա. Մայիսի 10-ին տեղեկագիրներով տեղեկացուց
 ամենախիստ քննարկողը կը ներկայանայ -
 արձանագրութեան անհրաժեշտ վճիռներու մասին:
 Սակայն, պետութիւնները տակաւին լուրջ
 բան մը չեն կրնար ընել եղանակ իրենց մօտէն
 ջոշափած անհրաժեշտութիւններուն դէմ: Վերջ
 տիկ միջադէպ մը կրնայ փառափար տալ
 ձեզ թուրք կառավարութեան անհրաժեշտ
 թիւն վրայ, որով կը խաղալ եւրոպական պե-
 տութիւններու հետ: Օգոստոս 14-էն եր-
 կու օր յետոյ պետութեանց հիւսանողները
 պտոյտի ելած էին, աչքէ անցնելու համար
 փոփոխութիւնները: պէճիկայի հիւսա-
 տուր զաւթիւ, պիթալիս խանը, պէճի-
 քացի վաճառական պ. Գուրոյի սենեակին
 մէջ կը հանդիպէ հայու մը, որ սարսափէ
 կոխած էր զրաւեցանքներուն ներքեւ և
 երկու օրէի վեր բերանը բան դրած չէր:
 պա մարդը պ. Գուրոյի Գրաստանէն անցնելու
 սպասուողն էր և վրան զենք չուներ:
 հասկցուելով որ խեղճ զոհ մըն է, զենքը
 պէճիկայի հիւսանողներուն կը փոխա-
 դրէն, ուր կը մնայ փանի մը շարքով: հա-
 րապարութիւնը իմանալով կը սկսի ան-
 դադար պահանջել մարդը և հիւսա-
 տուսարանը միշտ կը մերժէ ըսելով որ
 պոք մարդը թուրք Դատարաններու
 առջև ռա է Գործ չունի և Բոլորովին
 անմեղ մըն է: Սակայն կառավարութեան չվր-
 հատիւ և շարժելով կը խեղճ հիւսանողներուն
 ձեռն որ յանձնէ այդ մարդը, որուն ունի քանի մը
 պարզ հարցումներ միայն ընելիք: հիւսանողները
 վերջապէս կը զիջեն, պայմանաւ որ շեփամբ
 մէջ մարդը նորին պիտի յանձնուի: 24 ժամ 48
 կըլայ և 48՝ 168 և հիւսանողները, որ մար-
 դուն վերադարձին կըսպասէր, կը լսէ մահալը
 ծիւղի մը լուրջ ջոր «Արտասովոր» ատենը ար-
 ձակած էր անոր դէմէն ծանր նախադիմումներ
 որ բոլոր Եւրոպական պետութիւններուն ալ չը պաս-
 կան: Բողոքները չեղանկէր, պահանջով որ ան-
 միջապէս յեղծիքայի հիւսանողներուն յանձնուի
 մահուան դատաւարութեան հայր: տակաւին ս-
 տուգապէս չի գիտեր թէ կառավարութիւնը ետ-
 շարձուցած է խեղճը:

Հեռագիրը իմացուցած է արդէն Ձեզ, Ռու-
 տիկական նախարար Նազար փաշայի պաշտո-
 նակութիւնը, յաջորդ. նշանակուած է վճարել
 ատենի նախագահ Ծիֆիւ պէյ, մօլդովա խ-
 լամ և կարծի թուրք մը: Այս պաշտօնակա-
 թիւնը զանազան մեկնութիւններու առիթ տուած
 է: սպասելով աւելի ընդարձակ տեղեկութեանց կը
 նշանակէ՞ պատճառներին մէջ: Գալով գրած էի
 արդէն ձեզ Պ. Հանրի անուն յեղափոխական մը մ-
 պին. կ'երևի թէ Նազարի պաշտօնակալութիւնը այդ
 զուարթայի վէպին եղերական վախճան եղած է: Ա-
 մին պարագայի մէջ, այս անգամ սարսափելի է Բու-
 նապետութեան նեղակներուն համար: այս պիտի ըլլար
 6 տարուան հաւատարմական ծառայութեանց վար-
 ծառայութիւնը:

Նուրեան էֆենտի, նոր զիբ մը իւր

բազմաթիւ Մահաճարութեան դէմ, ջոր պիտի
 հրատարակէ մօտէն: պարունակութիւնը յայտնի է
 թու. Հաղագրի մէջ հրատարակած յօդուածով ինչ որ
 լսած էր Մահաճարութեան նկատմամբ, աւելի ըն-
 ղարձակօրէն կը բացատրէ այդ զիբին մէջ: Իսկ
 կառավարութիւնը մէջ շաբթուան մէջ իրարու հա-
 կառակ երկու հրաման տուաւ պատրիարքական
 ընտրութեան մասին. նախ իրատէ մը, հրամայեց
 մահաճարութիւնը վերաքննել և յետոյ պատրի-
 արքի ընտրութեան ձեռնարկել: Ետք ուրիշ ի-
 րատէ մը և առաջին հակառակ, հրամայեց որ
 պատրիարքական ընտրութիւն կատարուի, Ազգա-
 յին ժողով գումարուելով. սակայն Ազգային ժողովը
 պարտաւոր ըլլալ մահաճարութիւնը անպատ-
 ճառ վերաքննել: Այս վերջին իրատէն ղե-
 գործարարուած չէ, որովհետեւ գործարարները կը
 վախճան որ... նոր իրատէ մը չ'ըստանան:

Պրանսական ղեկավարութեան պահանջաւոր
 Լէֆտէր, անցեալ օր Հալէի կղզիին առջև
 ռազմափորձեր կատարեց: Պահանջաւոր 150 էն
 աւելի թնդածօթի հարուած արձակած ըլլալով
 Պոլսոյ թուրք ժողովրդին մէջ զարհուրելի սար-
 սափ մ'սկսաւ: Բոլոր թուրքերը հայերուն
 տունները կը խռովէին պաշտպանուելու համար:
 կարծելով որ Պետութեանց զրահաւորները արդէն
 Պոլսոյ նաւահանգիստը հասած են, սակայն պա-
 ճառը հասկցուելով հանդարտութիւնը տիրեց:
 Այս դէպքին վրայ Գոռու ծանուցարարով մը
 խնդրեց Պրանսական ղեկավարութեան, որ բարեհա-
 ճին այսուհետեւ ռազմափորձերը Մարմարայի բա-
 ցերը կատարել: Թուրք ժողովուրդը չ'սարսա-
 փեցնելու համար: Այս դէպքը քանի մ'օր խուսի-
 ցութեանց առարկայ եղաւ այլևայլ շրջաններու մէջ:

Թուրք թերթերը կը շարունակեն իրենց ծա-
 ծաղափու և նախապիտ յօդուածները հայ ազգին դէմ:
 պարզապէս ժամապիծակութիւն է միտել ղեկ պա-
 տախանները ողորդել: Թուրք խմբագիրներուն որոնք
 զարեւելի և քմեա՞ծ գրաքննութեան մը բեռին
 ներքեւ բոլորովին տափակցած են արդէն. գրեթէ
 օր չ'անցնիր որ թու. Հաղագրի և Խզտամ ահագին
 սուտերով լի յօդուածներ չ'հրատարակեն: Միշտ գ-
 զուից ակնարկութիւններով: Առաջինը ղեկ կը շա-
 րունակէ իսլամութեան փառաւոր յաղթութիւններուն
 (այսինքն կատարածներու) պատմութիւնները հրատարակել:
 — Նոր ցոյցերու կամ պատահարներու վախը երթա-
 լով կ'ամի ժողովրդի մէջ սակայն կառավարութիւնը
 բացէ ի բաց արգիլեց գաղթականութիւնը, անցաւ
 զիրը մերժելով, իմացայ նաեւ որ կառավարութիւնը
 օտար պետութեանց դէմ է, ինքզինքնով որ հանու-
 զեն գաղթող հայերը, Տաճկաստան վերադառնա-
 լու համար, ուր գրկաբաց պիտի ընդունուին երբեք:
 — Ընդհանուր խուսկցութեան առարկայ է նաեւ նոր
 ցոյց կատարող յեղափոխականներու իբր թէ Պոլսոյ
 գալը, ասոնք ժողովրդի զրոյցներ են. իմացուած է
 միայն որ նշանաւոր Ֆրանսացի անընթանական մը
 Պոլսոյ մտած է, չէ գիտցուի թէ ինչ նպատա-
 կաւ, կառավարութիւնը և ղեկավարութիւնները շատ
 անանգիստ են այս մասին: Այս երկուշաբթիէն ըս-
 կեալ Թուրքիոյ դէմ կը հրատարակէ Բիւզան-
 դիոն անուն հայերէն օրագիր մը: — Խափան-
 եալ Հայրենիք թերթի արտօնատէր Պ. Շահ-

նազար ազատ արձակուեցաւ երեկ:

2. անազան լուրեր:

Բարիգի մէջ վերջերս կազմուած է Փը-
 րան և հայկական ընկերակցութիւն մը հայկական,
 խնդրով զբաղելու համար: Յայտնի է որ նմանօրինակ
 ընկերակցութիւն մը արդէն տարիներէ չ'էր գոյու-
 թիւն ունի Անգլիոյ մէջ: Բարիգի այս Թաիթին կը
 բաղկանայ ֆրանսացի հետեւեալ ծանօթ անձնակազմու-
 թիւներէ:

- Հայր Տէլիքս Եսաֆթան. — Արեւելեան կա-
- թոլիկ վարժարաններու ընդհանուր վերատեսուչ:
- Պ. Ժիրո. — Դասախօս Եսաֆ վարժարանի:
- Պ. Իզաք. — Ծերակոյտի անդամ:
- Արքա Լըմի. — Ներսիսեան:
- Պ. Լեօն Մառիի. — Բարձրագոյն ուսումնե-
- րու վարժարանի դասախօս:
- Պ. Շահ Մեհի. — Բողոքական հոգի:
- Պ. Բօլ Բասի. — Բարձրագոյն ուսումնե-
- րու վարժարանի դասախօս:
- Պ. Շահիք Բիւ. — Բնութագրական հան-
- դիս տնօրէն:
- Պ. Բիւր-Բիւրեար. — Գրագետ:
- Պ. Շահ Ռեֆիլ. — Բարձրագոյն ուսումնե-
- րու վարժարանի դասախօս:
- Պ. Ա. Սապարի. — Աստուածաբանական դպ-
- րոցին տնօրէն:
- Պ. Շահ Վիւ. — Բողոքական հոգի:
- Պ. Բօլ Վիւ. — Կաթողիկոս անդամ և դա-
- սախօս:
- Պ. Շահ Վալի. — Բողոքական հոգի:

Ինչպէս կ'երևի այս ցուցակէն, կաթոլիկ
 երեցներ, բողոքական հոգիներ, ազատամիտ անձեր,
 վերջապէս ամէն կուսակցութիւններու պատկանող
 ծանօթ ֆրանսացիներ միացած են օգնելու համար
 հայկական դատին:

Կրօնական ժողով.

1. Գրիգորիոս Սպ. Յովհաննէսեան	49
2. Միքայիլեկ " Մուրատեան	47
3. Մաղաքիա " Օրմանեան	47
4. Վահրամ " Մանկունի	39
5. Գէորգ վեր. Իւթիւծեան	43
6. Գարեգին " Թաթարեան	42
7. Յովսէփ " Այվազեան	40
8. Նիքի " Դուրեան	38
9. Գաբրիէլ " Ալեհիթեան	34
10. Խաչատուր ԲՅՅ. Տ. Գաբրիէլեան	48
11. Յովհաննէս " Եսաֆթեան	38
12. Կարապետ " Սեթեան	26
13. Գաբրիէլ " Խանճեան	23
14. Կարապետ " Սանտալեան	18

Քաղաքական ժողով.

1. Գաբրիէլ Էփ. Նորասունկեան	56
2. Յարութիւն փաշայ Տատեան	55
3. Իլիաս Էփ. Զայեան	55

Անճա՛նկալի՛ն նոր տարեկանը շատեր ուզած էին մնալ:— Mr. L. Frank, 99, FRITHVILLE GARDENS, SHEPHERD'S BOCH, LONDON, W.

4. Միջին էջ. Սեթան	Քուէ	48
5. Միջին էջ. Աստուծոյ	"	48
6. Պրիմիտիւ Պարսկեցեան	"	43
7. Սեթանի մ. Սանուկեան	"	38
8. Սեթանի մ. Տէրիմիտեան	"	36
9. Սեթանի մ. Սեթանեան	"	35
10. Տիգրան էջ. Տէր Ներսէսեան	"	34
11. Ձարեհ էջ. Տիգրանեան	"	34
12. Տիգրան էջ. Նուստիանեան	"	38
13. Տիգրան էջ. Սեթանեան	"	38
14. Կարապետ էջ. Գաբրիէլեան	"	23

Անճա՛նկալի՛ն խումբ մը մասնակցներու վրէ
տներուն, հաւատներուն և հազարաւոր պնակալիցներ
ունենալով քաղաքական և կրօնական ժողով մը այս
պիսի գործադուտ տարրերէ կազմուած էր:

Այս ազատ վարչութիւնը իր արժանի օտ
կանն ալ ստեղծած է, այն է Բիւզանդ Բիւզանի,
օրաթերթը «Բիւզանդիոն», որուն առաջին թիւ
ընդունաւ: Ինչպէս յայտնի է այս ցերեկ մարդը իր
ընկերակիցները մատնելով և զրպատելով պատճառ
եղած էր «Արեւելք» շրջան և ինք Ոստիկանու
թեան օժանդակութեամբ նոր թերթի մը արտօնու
թիւնը առած էր, ասկէ զատ իր վասակի ծառայու
թիւններուն համար ալ 200 ոսկի ընդունելով կա
ռավարութենէն Բիւզանդ Բիւզանի իր առաջին թերթին
կէտը ընդունած է Սուլթանին ներքոյ կարգաւորով:

Ասանկ Սուլթանին Բիւզանդի պէս ազատ ճիշ
բողաքէր մը միայն կը վայելէր:

Նոյն մէկ հայ, անշուշտ պիտի կարգայ այս թեր
թը:

Իզմիրին կը գրէ Բարիդի «Էթիո», օրաթերթին:
Իզմիր-Քասապա երկաթուղիին մամբան աւազակնե
րով ընդունած է: Այստեղ վայրէ, քեանիլ փաշայ, որուն դի
մում եղած էր, որպէսզի այս աւազակներուն առաջը առ
նէ, պատասխանած է թէ միայն քանի մը անշան աւազակա
խմբեր կան:

Այդ միջոցին, հարուստ Անգլիացի մը, գնդապետ
Մայիթ անուն, փափաք յայտնած ըլլալով որսի երթալու,
վայրէ երեք զապթի տուած է իրեն իբրև հետևորդ:
Երեք օր ետքը որսորդը և երեք հետևորդները գտնի բու
նուած են աւազակներէն: Աւազակները զանաք ազատ
ձգելու համար 350000 փրանք կը պահանջէ՝ զոր
թուրք կառավարութիւնը պիտի պարտաւորի վճարել:

Աւազակներու գրած նամակը, հետեւեալ յան
դուգն յետ գրութիւնը կը պարունակէ:

«Կը խնդրենք կառավարութենէն որ անմիջապէս
անգլիներէն գիտցող մէկը խրկէ հոս, մեր բանտարկեա
լը անգլիներէն ուրիշ ընդու չը գիտնալուն պիտի
կը ներշնայ կորսն»:

Դժայեղը՝ կը գրէ թէ, Պետութիւնները հա
մաձայն չեն թուարթոյ հանրային պարտքի վարչու
թեան միջ ուսու ներկայացուցիչ մը զնելու մասին:
Պետութիւններու անհամաձայնութիւնը այն է որ կը վախ
նան թէ Ռուսիոյ միջամտութեամբ այդ ելանական գոր
ծին մէջ, իր ձեռքը առիթ մը չըլլայ քիչ առեկէ եւ
քը աւելի բործուն միջամտութիւն մը չընելու:

Վիեննայի կը հեռագրեն թէ թերթերը վախ կը
յայտեն որ Ճրանսական դեսպան, Պիլապոնի Սուլ
թանին իւրած գիշումները, պատճառ չըլլան ընդհ.
և գործական բարենորոգումներու յապաղման:

«Տէլի» ներքին կը գրէ թէ երբեք չի գտնուի
Թիւրք Տրանսպիւն և Ռուսիոյ պիտի թողու ներքին,
խնդիրը չունենալ համար նոր ծրագիր մը պատրաստելը,
եթէ այժմեան ծրագիրը Չուրը խնայ:

«Տէլի» ներքին կը գրէ որ, եթէ բարենորոգումները
առանց գործադրութեան հան, Պետութիւնները իրա
ւունք պիտի տան խալիլ, որպէսզի առանձին գոր
ծէ թուրքիոյ դէմ:

Վիեննայի թերթերը բուռն կերպով կը քննա
շատեն, պետութիւններու անկարողութիւնը, Սուլթա
նին կարևոր բարենորոգումներ ստանալու մասին:

Կ. Պոլսէն նոյ. 20 թուով կը հեռագրեն թէ՝
Քանի որ Կայսերական իրաւունք մը կարևոր բարե
նորոգումներ պիտի մտցնէ թուրքիոյ վարչական և ե
լանական դրութիւններուն մէջ:

Կ. Պոլսէն կը գրէ թէ՝ Խարբէրթի նախն
գին միջ Աթրէիկ հայկական գիւղը, կառավարու
թեան կանոնաւոր ջորագ բանակին մէջ ծառայող
բազմաթիւ ջորքեր, յանկարծ ներս մտնելով ամբողջ
գիւղը, աւարի առին, խեղճ բնակիչներին իրենք զի
րենք աջատողները խոյս տուին լեռները, իսկ միւ
նացածները այդ վայրէջներուն սրէն անցան:

Այս առթիւ Տրապիզոնի Եւրոպական հրապ
տոնները տեղեկաբեր մը խմբագրելով իրենց կառա
վարութեանց հաղորդեցին:

Գաղափարային (կնկիր-րիս) 4-րդ հեռագրութեամբ
վարենիկ գիւղի անգին և անպաշտպան հայերու վր
այ թուրք խումբեր յարձակած և բնակիչներէն 1900
և ըստ ոմանց 2000 հայեր սպանուած են:

Այս լուրը Անգլ. աղբիւրներէ առնուած տեղե
կութիւններ կը հաստատեն:

Ռուսիոյ կառավարութիւնը կակախոյ սահմա
նին մէջ բազմաթիւ ջորքեր համարմբած է, և կը
պատէ ի հարկին Հայաստան մտնել և գրաւել ան
հանդարտ գաւառները:

Օսկայէն կը հեռագրեն թէ Ռուս. կառավա
րութիւնը Ան Ծովու վրայ իր նաւատորմը կը ջո
րացնէ և զինուորական ոյժը կը բազմապատկէ:

Կըսուի թէ՝ ջորքերու թիւը 900,000-ի պիտի
հասնի:

Կ. Պոլսէն կը գրէ թէ՝ Ռուսիոյ, Աւստրիայ,
և իտալիայ յոյսոյ իրենց դեսպանները, ետ կանչած
էին, որոնք մի քանի օր առաջ մեկնած էին. այս յան
կարծակի մեկնումը՝ նպատակ ունի եղեր թուրք
իոյ մէջ բարենորոգումներ մտցնելու համար նոր իր
բանազներ ստանալ Դիւանագիտական ակումբները
անհամբեր կը պատահեն անոնց վերադարձին, մանա
ւանդ Ռուսիոյ դեսպան Պ. Նելիտովի, որ ամենին
առաջ փութով մեկնած էր Ս. Պետրոպոլսի, բարե
նորոգմանց համար, նոր հրահանգներ ստանալու
համար Ձարին:

Դեսպաններուն վերադարձը կը երևի թէ
նոր կերպարանք մը պիտի տայ ներքինեան խռո
րոյն, և պետութիւնները նոր քաղաքականութիւն
մը ձեռք պիտի առնեն թուրքիոյ դէմ: Բ. Ռու
սը անհանգարտութեամբ կը դիտէ պետութեանց
այս քայլափոխումը, հակառակ իր այն ապագային
Չանքերու՝ որ ըսած էր Անգլիոյ ի նպաստ հա
յերու առաջադրած բարենորոգմանց ծրագրին և
կառավարեցնել Աւստրիան:

Կ. Պոլսէն կը գրէ թէ՝ անցեալ շուրջաւորի
ի մայր-Եկեղեցի, բռնական Անգլ. Ժողով գումարս
ուեցաւ, և 62 երեսփոխան ներկայ գտնուելով՝ 48
քառ-ի առաւելութեամբ, Արմաշու վանանյոյ Տ.
Մաշաբեայ Օրմանեան Պատրիարք հռչակուեցաւ:

Առաքելութիւն մը.

Նազարեկի ինքզինքը պարտուած լի համարի:
Առաքելութիւն մը ծածկայ հանած է Լոնտոն
նէն իրեն համար բորբակաւ ընելու համար:

Այս առաքելութիւնը երկու միամիտ երիտասա
րդներէ կը բաղկանայ, Այս երիտասարդները, որոնց
նազարեկի միսիկ ձեռք նոր հագուստ առած և ծա
ռու ծախքերին տուած է, պաշտօն ունին եղեր աս
տին անգին երթալով նազարեկի խնդիրը լուսաբանել:

Աթթիքին ևս անցան այս լուսաբանութեան
համար: Կարծեք այստեղի Հնչակեաններու կողմի ի
րենց եղած ընդունելութիւնը մեծ քաջալեր մը չի
տի ըլլայ առաքելութեան համար:

Մաշիքը որ ուրիշ տեղեր աւելի բաղաւոր
ըլլան և իրենց նման միամիտներ յաջորդեն գտնել:

Նազարեկի դատ բացած է հնչակեան կուսակ
ցութեան կէտրոնին դէմ՝ ըսելով թէ՝ «Հնչակ» կու
սակցութեան թերթը չէ, այլ իր անձնական թերթը,
հետևաբար, կուսակցութիւնը իրաւունք չունի այդ
անունով թերթ հրատարակելու:

Վերջ. շեռ չէ տրուած, միայն զատարանը
հրամայած է կուսակցութեան որ մինչև զատաւ
տանին լրանալը «Հնչակ» չը հրատարակէ:

Պոլսէն հովիւ մը.

Արծ. տէր Գարեգին Տէր-Մարտիրոսեան՝
Արծրունի քահանայ Եփրատոսէ քաղաքս հա
սաւ: Տեղադր. հայ գաղթականութիւնը,
մտադիր է հայկական փոքրիկ մատուռ մը հաս
տատել հոս, և մշտնջանապէս խնամել նորին ար
ժանապատուութիւնը, իբրև հոգևոր հովիւ:

Մեր նախորդ թուով խոստացած էինք ամէն քա
ղաքի մէջ ներկայացուցիչներու անունները հրատարակել,
որպէսզի մեր Պատ. ընթերցողները կանոնաւորապէս ա
տանան իրենց թերթերն անոնցմէ ստացնելու և նախ
ըզ որ հրապարակու անոնց անուններու պարզումը ինչ
ինչ բանաւոր պատճառներով ապագայէ վտանգ մը կրնայ
թերթ, ուստի որոշեցինք յանձնարարել միայն մեր ներքե
յացուցիչներու, որ իւրաքանչիւր թերթ ժամանակին
իրենց նշանակեալ անունաց յանձնել, այս կերպով դի
րութեամբ պիտի ծանցուին մեր ներկայացուցիչները:

Խմբագրութիւն Միութիւն»